ՄԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՏՈՆԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Սուրբ Ծնունդի Նպատակը - Մաս 1

«Այնտեղ դաշտում մնացող հովիվներ կային, որոնք գիշերն իրենց հոտերն էին պահում: Եվ ահա Տիրոջ հրեշտակը նրանց առաջ կանգնեց. Տիրոջ փառքը ծագեց նրանց շուրջը, ու մեծ վախ ապրեցին: Եվ հրեշտակը նրանց ասաց. «Մի՛ վախեցեք, որովհետև ահա ձեզ մեծ ուրախություն եմ ավետում, որ ամբողջ ժողովրդինն է լինելու. այսօր Դավթի քաղաքում ձեզ համար Փրկիչ ծնվեց, որ է Օծյալ Տերը: Սա ձեզ համար նշան կլինի. մի երեխա կգտնեք խանձարուրով փաթաթված ու մսուրի մեջ դրված»: Եվ հանկարծ այն հրեշտակի հետ հայտնվեց երկնավոր զորքի մի բազմություն, որ օրհնում էր Աստծուն և ասում. «Փա՛ռք Բարձրյալ Աստծուն, երկրի վրա՝ խաղաղություն, ու մարդկանց մեջ՝ հաճություն»: Եվ երբ հրեշտակները նրանց մոտից երկինք բարձրացան, հովիվներն իրար ասացին. «Եկեք մինչև Բեթլեհեմ գնանք ու տեսնենք տեղի ունեցածը, որը Տերը ցույց տվեց մեզ»: Շտապելով եկան և գտան Մարիամին ու Հովսեփին և երեխային՝ մսուրի մեջ պառկած: Եվ երբ տեսան, ճանաչեցին նրան այն խոսքից, որ իրենց ասվել էր երեխայի մասին: Բոլոր լսողներն էլ զարմացան հովիվների պատմածների վրա: Իսկ Մարիամն այդ ամենը պահում էր իր սրտում և մտորում: Հովիվները հետ դարձան՝ Աստծուն փառաբանելով և օրհնելով այն ամենի համար, որ լսեցին ու տեսան, ինչպես որ ասվել էր իրենց:» Ղուկաս 2:8-20

Մարդը իր էությամբ հակված է մոռանալու, բայց մեր հավատքը զորանում է հիշելով

«Տերն ասաց Մովսեսին. «Գնա՛, իջի՛ր, որովհետև ապականվեց քո ժողովուրդը, որին դուրս հանեցիր Եգիպտոսի երկրից: Նրանք շուտով շեղվեցին այն ճանապարհից, որ պատվիրեցի իրենց: Զուլածո հորթ շինեցին իրենց համար, երկրպագեցին նրան, զոհեր մատուցեցին նրան և ասացին. “Սրանք են քո աստվածները, ո՛վ Իսրայել, որ քեզ հանեցին Եգիպտոսի երկրից”:» Ելից 32:7-8

«Դեռ չե՞ք հասկացել կամ չե՞ք հիշում հինգ հազար մարդու համար այն հինգ հացի մասին կամ թե քանի՛ կողով վերցրիք, ոչ էլ այն յոթ հացը չորս հազար մարդու համար կամ թե քանի՛ զամբյուղ վերցրիք:» Մատթեոս 16:9-10

«Այդ ծոպերը պետք է ունենաք, որպեսզի տեսնեք այն և ձեր միտքը բերեք Տիրոջ բոլոր պատվիրաններն ու կատարեք դրանք և չհետևեք ձեր սրտերի ու ձեր աչքերի ցանկություններին, որոնց հետևից գնալով՝ դուք մոլորվում եք:» Թվոց 15:39

1. Անցյալ – Իմ անցյալը ներված է

«Երբ Հիսուսը լսեց, նրանց ասաց. «Առողջներին բժիշկ պետք չէ, այլ հիվանդներին. ես եկել եմ ոչ թե արդարներին, այլ մեղավորներին ապաշխարության կոչելու:» Մարկոս 2:17

«Երանի՜ նրանց, որոնց անօրենությունները ներվեցին,և որոնց մեղքերը ծածկվեցին: Երանի՜ այն մարդուն, որի մեղքը Տերը հաշվի չի առնի:» Հռովմայեցիս 4:7-8

«Որը մեզ խավարի իշխանությունից ազատեց ու մեզ իր սիրելի Որդու արքայության մեջ փոխադրեց, որի միջոցով ունենք փրկություն՝ մեղքերի թողություն:» Կողոսացիս 1:13-14

2. Հիմա – Աստծո հոգին իմ մեջ է

«Եվ եթե Հիսուսին մեռելներից հարություն տվողի Հոգին բնակվում է ձեր մեջ, ապա Քրիստոսին մեռելներից հարություն տվողը ձեր մահկանացու մարմիններն էլ կկենդանացնի իր Հոգու միջոցով, որ բնակվում է ձեր մեջ:» Հռովմայեցիս 8:11

3. Ապագա – Ես տեղ ունեմ երկնքում

«Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. ով լսում է իմ խոսքը և հավատում է ինձ ուղարկողին, հավիտենական կյանք ունի և չի դատապարտվի, այլ մահից դեպի կյանք է անցել:» Հովհաննես 5:24

«Որպեսզի ինչպես որ մեղքը մահվան միջոցով թագավորեց, այնպես էլ մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով շնորհը արդարությամբ թագավորի հավիտենական կյանքի համար:» Հռովմայեցիս 5:21

4. Հոգևոր աճում – ես կարող եմ շարունակ փոխվել

«Ահա սերմնացանը ելավ սերմանելու: Երբ նա սերմանում էր, մի քանի սերմնահատիկ ճանապարհի եզերքին ընկան, և երկնքի թռչունները եկան ու դրանք կերան: Իսկ ուրիշները քարքարոտ տեղ ընկան, որտեղ շատ հող չկար, և իսկույն բուսնեցին հողի սակավության պատճառով: Բայց երբ արևը ծագեց, վառվեցին, և որովհետև արմատ չունեին, չորացան: Ուրիշները փշերի մեջ ընկան, և փշերը բարձրացան ու դրանց խեղդեցին: Իսկ ուրիշներն էլ բարեբեր հողի վրա ընկան ու պտուղ տվեցին. մեկը՝ հարյուրապատիկ, մեկը՝ վաթսունապատիկ, և մեկը՝ երեսնապատիկ:.» Մատթեոս 13:4-8

Հաջորդ Կիրակի:

Ս. ԾՆՈՒՆԴԻ ՃՇՄԱՐԻՏ ԻՄԱՍՏԸ

Հովիվ Սարօ Խաչիկեան